



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

27 սեպտեմբերի 2011թ. թիվ 452

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն ավագ դպրոցների լիազոր մարմին ճանաչելու և նրան լիազորություններ վերապահելու մասին» N 19-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հունիսի 2-ի «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 774-Ն որոշումները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011թ. սեպտեմբերի 22-ի թիվ 01/12,2/4701-10 գրությունը՝

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Մ

1. «Վանաձորի Ս.Նալդոնյանի անվան N 13 ավագ դպրոց», «Ստեփանավանի ավագ դպրոց», «Ալավերդու Ս.Շահումյանի անվան N 5 ավագ դպրոց», «Ալավերդու Սայաթ-Նովայի անվան N 8 ավագ դպրոց», «Սպիտակի Ս.Ավետիսյանի անվան ավագ դպրոց» և «Տաշիրի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայությանը հանձնելու հետ կապված հանձնման-ընդունման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանի վրա:

Հ Հ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. սեպտեմբերի 27  
ք.Վանաձոր